# ԲՅՈՒԶԱՆԴԻԱ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Միջնադարում հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներում կարևոր դեր է խաղացել Բյուզանդական կայսրությունը։ Նույն ժամանակ պետք է ընդգծել, որ բյուզանդական բազմազգ կայսրության մեջ հույներից հետո, հայերը ամենամեծ կշիռն ունեին։ Խոսել հայ-բյուզանդական հարաբերությունների մասին, նշանակում է խոսել ամենից առաջ Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայսրության վարած նվաճողական քաղաքականության մասին, հայ ժողովրդի գժվարին, ուժերից վեր, հերոսական պայքարի մասին՝ իր ինքնուրույնությունը, անկախությունը, ազգային դեմքը պաշտպանելու համար։ Այդ պայքարը հայ ժողովուրդը վարում էր վաղուց, այն ժամանակվանից, երբ դեռ գործ ուներ Հռոմեական կայսրության հետ։ Դեռ առաջին դարից (մ. թ. ա.) Հռոմը ձգտում էր տարածել իր գերիշխանությունը Հայաստանում։

Հայաստանն ընկած էր Հռոմեական կայսրության և պարթևների տերության միջև, որին հաջորդեց ավելի հզոր Սասանյան Իրանը։ Սակայն ինչպես Հռոմը, այնպես էլ Իրանն առանձին-առանձին չկարողացան հաստատել իրենց տիրապետությունը Հայաստանում, մինչև որ 387 թ. երկու ախոյաններին հաջողվեց միմյանց միջև բաժանել Հայաստանը։ Այսպիսով, դրվեց Հայաստանի միասնության խախտման և երկու մասերի բաժանման սկիզբը, և Բյուզանդիան ժառանգեց ոչ միայն այս իրադրությունը, այլև Հռոմի նվաճողական քաղաքականությունը՝ Հայաստանի նկատմամբ։

Արշակունի վերջին թագավորը, որ հաստատվել էր Բյուզանդական Մեծ Հայքում, ձևականորեն համարվում էր Հռոմեական կայսրության սահմաններում ապրող հայոց թագավոր։ Բայց նրա մահից հետո այլևս «ոչ ևս կացուցին Յոյնք ի բաժնի իւրեանց թագաւոր և աշխարհին իւրեանց մասին կացուցին Յոյնք կոմէսս իշխանս» (Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, գիրք Գ, գլ. 46)։ Հակառակ դրան, բյուզանդական Մեծ Հայքը և հատկապես հարավային Հայաստանի նախարարությունները (սատրապությունները) վայելում էին որոշ ինքնուրույնություն և իրավական տեսակետից դաշնակցային հարաբերությունների մեջ էին կայսրության հետ։

Բյուզանդիան որոշ չափով հաշվի էր նստում իր տիրապետության տակ գտնվող հայ ավագանու հետ, քանի դեռ լարված հարաբերությունների մեջ էր Սասանյան Իրանի հետ։ Բայց երբ այդ երկու դարավոր ախոյանների միջև 532 թ. կնքվեց հաշտության պայմանագիր, կայսրությունն իրեն ազատ զգաց սկիզբ դնելու մի քաղաքականության, որ Հուստինիանոս Ա-ի նովելլաներում ձևակերպված է հետևյալ բառերով. «Որ հայերը ևս ամեն ինչում հետևեն հռոմայեցիների օրենքներին»։ Աստիճանաբար վերացվում է հայ իշխանությունների ինքնուրույնությունը, մի բան, որ սկսվել էր դեռ Զենոն կայսեր ժամանակվանից, տարածվում են բյուզանդական կարգն ու կանոնը, ծանր հարկա-

պահանջությունը։ Հրապարակվում են Հուստինիանոս Ա-ի մի շարք հրովարտակները երկրի բաժանման մասին, ապա և հրովարտակներ, որոնք հիմքից խարխլում էին հայոց դարավոր ժառանգական իրավունքը և հայկական իշխանությունների ինքնուրույնության հիմքը հանդիսացող ամբողջ Բյուզանդիային ենթակա մասի նախարարական կարգը։ Հայկական զինված ուժերը, որոնք այնքան անհրաժեշտ էին հայրենիքի պաշտպանության համար, հարկադրված էին պաշտպանել կայսրության շահերը Աֆրիկայում, Իտալիայում, Թրակիայում, Լազիկայում և այլուր։ Միայն Հուստինիանոս Ա-ի ժամանակ, Պրոկոպիոս Կեսարացու տվյալների համաձայն, 17-ից ոչ պակաս հայազգի զորավարներ ծառայում էին բյուզանդական բանակում, այդ թվում՝ նշանավոր Նարսեսը, Արտավան ու Արշակ Արշակունիները, Հրահատ, Սահակ և Ներսես Կամսարականները։ Բյուզանդական արքունիքի պահպանությունը հենց հայերին էր վստահված։

Հայաստանն արտաքին թշնամուց պաշտպանելու պատրվակի տակ, երկրում սկսվեց հսկայական բերդաշինություն, բերդերում հաստատվեցին բյուզանդական ստվար զորաբանակներ և կայազորներ։ Դրանց նպատակը ոչ միայն արտաքին թշնամու դեմ պայքարելն էր, այլև ներքին խլրտումների առաջն առնելը, խլրտումներ, որ վաղուց էին իրենց զգացնել տալիս։ Հակաբյուզանդական ելույթներն է՛լ ավելի մեծ ծավալ ստացան 532 թ. իրանա-բյուզանդական հաշտության պայմանագրի կնքումից հետո։ Բայց պայքարն անհավասար էր։

Իրանա-բյուզանդական 591 թ. պայմանագրով Հայաստանի մեծագույն մասը անցավ Բյուզանդիայի ձեռքը։ Բյուզանդական ազդեցությունը Հայաստանում է՛լ ավելի ուժեղացավ։ Կայսրությունն սկսեց խառնվել հայերի նաև եկեղեցական գործերին, հասցնելով մինչև անգամ իր հողերի վրա հաստատել երկրորդ՝ քաղկեդոնիկ կաթողիկոսություն։ Բանն այն է, որ 301—303 թթ. քրիստոնեությունն ընդունելով, հայ ժողովուրդը հակադրվեց Սասանյան Իրանի նվաճողական քաղաքականությանը, իսկ մերժելով Քաղկեդոնի 451 թ. տիեզերական ժողովի որոշումները և երկաբնակությունը (դիոֆիզիտիզմ), իր հակաքաղկեդոնական մոնոֆիզիտ դավանանքով Հայաստանը մերժեց և կայսրությանը միավորվելու բաղաքականությունը։ Այդպիսով, դավանաբանական դոգմատիկ վեճերը սքողում էին քաղաքական կարևոր հարցեր։

Եթե Բյուզանդիան քաղաքականապես այդ շրջանում հայերի վրա բացասաբար ազդեց, ապա մշակույթի տեսակետից ունեցավ բարենպաստ նշանակություն։ Հայերեն գրերի գյուտի, հայկական ինքնուրույն և թարգմանական գրականության առաջացման մեջ բյուզանդական մշակույթը զգալի դեր է խաղացել։ Բազմաթիվ հայ երիտասարդներ իրենց ուսումնառության համար գնում էին Աթենք, Կոստանդնուպոլիս, Անտիոք, Ալեքսանդրիա, Տրապիզոն և հարուստ պաշարով վերադառնում ու նպաստում հայ մշակույթի է՛լ ավելի զարգացմանը։ Պատմագրություն, գրականություն, փիլիսոփայություն, քերականություն, երաժշտություն, աշխարհագրություն, ճարտարապետություն, արվեստ և գիտության այլ բազմաթիվ ճյուղեր իրենց զարգացումն են ապրում հենց այս ժամանակաշրջանում։ Հայ-բյուզանդական դավանաբանական պայքարը ևս մշակույթի հարցում հայերի համար ունեցավ դրական նշանակություն այն իմաստով, որ նպաստեց փիլիսոփայական մտքի և պոլեմիկայի զարգացմանը։

Հայերեն առաջին, նախ և առաջ Աստվածաշնչի, թարգմանությունները կատարվել են հունարենից և ասորերենից։ Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմությունը» և «Քրոնիկոնը», Ալեքսանդր Մակեդոնացու վեպը, Փիլոն Եբրայեցու երկերը, հայրաբանական գրականությունը (Բարսեղ Կեսարացի, Կյուրեղ Ալեքսանդրացի, Գրիգոր Նյուսացի, Գրիգոր Նազիանզացի, Հովհան Ոսկեբերան) թարգմանաբար հայտնի են դառնում հայ ընթերցողին արդեն այս շրջանում։ Այդ երկերից մի քանիսը պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ։

Հայաստանում առաջանում է այսպես կոչված հունաբան դպրոցը, որի հետևորդները հունարենից թարգմանում են բազմաթիվ փիլիսոփայական, քերականական, ճարտասանական և այլ երկեր (Պլատոնի, Արիստոտելի, Դիոնիսիոս Թրակացու, Թեոն Ալեքսանդրացու և այլոց երկերը)։ Հունաբան դպրոցի խոշոր ներկայացուցիչները՝ Դավիթ Անհաղթ, Դավիթ Հարքացի, Հովհան Մայրավանեցի, ստեղծագործում են իրենց նշանավոր փիլիսոփայական ինքնուրույն երկերը։ Նրանց գործունեությունն, ի միջի այլոց, խոշոր նշանակություն ունեցավ հայոց լեզվի բառապաշարի հարստացման և գիտական տերմինաբանության գործում։

V—VII դդ. հայկական մատենագրությունը, մասնավորապես պատմագրությունը, բազմիցս անդրադարձել է ոչ միայն հայ-բյուզանդական փոխհարաբերությունների ամենատարբեր բնագավառներին (ռազմա-քաղաքական, տնտեսական, կրոնա-դավանաբանական, մշակութային), այլև զգալի տեղ է հատկացրել Բյուզանդիայի պատմությանը և նրա փոխհարաբերություններին՝ կայսրության հարևան երկրների և ժողովուրդների հետ (Սասանյան Իրան, ավելի ուշ՝ արաբական խալիֆաթ և այլն)։

Նույն այդ ժամանակաշրջանում ձևավորվում և նշանակալից զարգացման են հասնում հայկական վաղ ֆեոդալական ճարտարապետությունն ու արվեստը, որոնք երևան են բերում բազմաթիվ ընդհանրություններ վաղ քրիստոնեական, այդ թվում և բյուզանդական նյութական մշակույթի հետ։

VII դ. Մերձավոր Արևելքի քաղաքական իրադրությունը արմատական փոփոխություններ է կրում։ Ասպարեզ է իջնում արաբական խալիֆաթը՝ Բյուզանդական կայսրության նոր հզոր մրցակիցը, որը նվաճում է Հայաստանի մեծ մասը։ Հայաստանն ավելի քան երկու հարյուր տարով անցնում է արաբական գերիշխանության ներքո, որի ժամանակ հասկանալի է, հայ-բյուզանդական քաղաքական կապերի մասին խոսք լինել չէր կարող։ Հայ-բյուզանդական հարաբերությունները շարունակվեցին այլ ուղղությամբ։ Հայաստանում ստեղծված ծանր վիճակը պատճառ դարձավ հայերի դեպի Բյուզանդիա կատարած արտագաղթի է՛լ ավելի լայն ծավալ ստանալուն, արտագաղթ, որն սկսվել էր դեռ Արշակունյաց հարստության վերացումից հետո։ Եթե V—VI դդ. որպես կանոն հայ նախարարները, ազնվականությունն ու զինվորականությունն էր Բյուզանդիայում ապաստան որոնում, ապա արաբական տիրապետության ժամանակ հայ աշխատավորությունը ևս զանգվածորեն դիմում է այնտեղ, հաստատվում Փոքր Հայքում և հայացնում այն զուտ հայկական շրջանները, որոնք հռոմեական և բյուզանդական բազմադարյան տիրապետության ժամանակ սկսել էին հունանալ, կորցնելով իրենց ազգային դեմքը։

Այս շրջանում է, որ աշխատավոր խավերի հակաֆեոդալական տրամադրություններն արտահայտվեցին պավլիկյան աղանդավորական շարժման ձե-

վով։ Ծագելով Բյուզանդական Հայաստանում, այն ժամանակի ընթացքում հսկայական ծավալ ստացավ, տարածվելով Բյուզանդական կայսրության տարբեր շրջաններում, աշխատավորական նորանոր զանգվածներ ընդգրկելով։ Այդ շարժման հիմնական կորիզը բաղկացած էր հայ և հույն աշխատավորներից։ Դեռ VIII դ. կեսերին էր, որ Կոստանդին Ե կայսրը Մելիտենից և Թեոդոսուպոլիս-Կարինից հայ պավլիկյանների զանգվածները գաղթեցրեց Թրակիա, որոնք տեղում ոչ միայն տարածեցին պավլիկյան աղանդը, այլ եկան Թրակիայում ամրապնդելու այն հայ տարրը, որ դեռ Մավրիկիոս կայսեր օրոք հաստատվել էր այնտեղ և հսկայական դեր էր խաղում կայսրության սահմանները թշնամուց պաշտպանելու գործում։ Սակայն հայերը սոսկ ռազմիկներ չէին, նրանք Թրակիայում քաջ կռվողի դեր չէին խաղում միայն։ Նրանք հմուտ առևտրականներ ու արհեստավորներ էին և նպաստեցին ոչ միայն Թրակիայում, այլև նրա մերձակա շրջաններում առևտրի և արհեստների զարգացման գործին։ Թեև ժամանակակից աղբյուրներն այդ մասին տեղեկություններ չեն պահպանել, այնուամենայնիվ, այն փաստը, որ բուլղար խան Կրումի Թրակիայում ձեռք բերած ավարի մեջ հիշված են «հայկական գորգերը», թույլ է տալիս եզրակացնելու, որ հայ արհեստավորների մեջ կային հմուտ գորգագործներ և ջուլհակներ։

Կայսրությունը հայերին գաղթեցնում էր ոչ միայն Թրակիա։ Հայտնի է, որ դեռ VI—VII դդ. բազմամարդ հայ գաղութներ էին առաջացել Կիպրոսում և հին Պերգամոնի շրջանում, որտեղից ծագում էր բյուզանդական գահին տիրացած Ֆիլիպիկոս-Վարգանը։

Բյուզանդիայում ապաստանած հայ տարրը կյանքի տարբեր բնագավառներում (հատկապես ռազմական) նոր դիրքեր է նվաճում։ Հայերը դառնում են VII դ. առաջացած բյուզանդական ռազմական շրջանների՝ բանակաթեմերի զորավարներ։ Բյուզանդական կայսրության՝ կարևորությամբ ու չափերով երկրորդ բանակաթեմը «Արմենիակների» էր կոչվում այդ բանակաթեմում, ինչպես և նրա կից շրջաններում ապրող հայերի պատճառով։ Արմենիակների բանակաթեմի ռազմական ուժերը հայերից էին բաղկացած։ Մինչև X դ. սկզբները Արմենիակների բանակաթեմի հողերից կազմակերպվեցին Խարսիանոն, Խաղտիք, Կոլոնիա և Սեբաստիա բանակաթեմերը։ Հայերով էր բնակեցված նաև X դ. սկզբին կազմակերպված «Միջագետք» և Լիկանդոս բանակաթեմերը։

VIII դ. Փոքր Ասիայի բանակաթեմերի մեծ մասի զորավարները հայեր էին։ Անատոլիկոն բանակաթեմի զորավարը Լևոն Գ-ի փեսա հայազգի Արտավազդն էր, որ քիչ էր մնացել տիրանար բյուզանդական գահին։ Լևոն Գ-ի թոռ Լևոն Դ-ի ժամանակ Տաճատ Անձևացին Բուկելլարների բանակաթեմի զորավարն էր։ Այդ նույն ժամանակ Անատոլիկոնի զորավարը Արտավազդ Մամիկոնյանն էր։ Կոստանդին Զ-ի օրոք Արմենիակների բանակաթեմի զորավարն էր Վարդանը, մի քիչ հետո՝ նշանավոր Ալեքսիոս-Մուսելեն (Մուշեղ)։ Հայկական ծագում ուներ այդ ժամանակներում հանդես եկած Սկլերոսների ընտանիքը, որի անդամներից մեկը՝ Վարդասը դարձավ Թրակեսիոն բանակաթեմի զորավար։ Նույն ընտանիքից մի այլ Վարդաս Նիկեփոր Ա կայսեր օրոք դարձավ Անատոլիկոն բանակաթեմի զորավար։

IX դ. պատկերն ամենևին չի փոխվում։ Հայերն արդեն տիրանում են գահին։ 813 թ. հայազգի Լևոնը, Լևոն Ե անվան տակ ութ տարի իր ձեռքում է պա-

հում կայսրության գայիսոնը։ Միքայել Բ-ի որդի Թեոփիլոսը ամուսնացած էր հայազգի Թեոդորայի հետ, որն իր ամուսնու մահից հետո շուրջ տասը տարի կառավարեց պետությունը իր որդու Միքայել Գ-ի մանկահասակ լինելու պատճառով։ Միքայել Գ-ի թագավորության վերջին շրջանում երկրի փաստական իշխանությունը գտնվում էր Թեոդորայի եղբոր՝ Վարդասի ձեռքում, որն ստանալով կեսարի բարձրագույն պատվաստիճանը, պետք էր կայսր հռչակվեր, եթե Միքայել Գ-ը վախճանվեր անզավակ։ Թեոդորայի հորեղբայրը՝ Մանվելը Արմենիակների բանակաթեմի զորավարն էր դեռ Լևոն Ե-ի ժամանակ։ Պակաս դեր չէր խաղում Թեոդորայի մյուս եղբայրը՝ Պետրոնասը, որը 863 թ. կարևոր հաղթանակ տարավ արաբների դեմ, որից հետո վերջիններիս դեմ մղվող երկարատև պատերազմի նախաձեռնությունն անցավ կայսրության ձեռքը։

Հայերը կարևոր դեր են խաղում ոչ միայն քաղաքական ու ռազմական, այլև հոգևոր ու մշակութային ասպարեզում։ Կեսար Վարդասն էր, որ վերաբացեց Մագնավրայի համալսարանը։ Այդ համալսարանի՝ ժամանակակից տերմինով ասած, ռեկտորը հայազգի Լևոն փիլիսոփան էր, որ միաժամանակ աստղաբաշխ էր, մաթեմատիկոս, երկրաչափ և երաժիշտ։ Նրա համբավը տարածվել էր մինչև Բաղդադ՝ խալիֆաների արքունիքը։ Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռին էր տիրացել Հովհաննես Քերականը՝ նույնպես հայազգի, Բյուզանդիայում անուն հանած աստղաբաշխ Բագարատի որդին, Արշավիր պատրիկի եղբայրը և Լևոն փիլիսոփայի հորեղբորորդին։ Հովհաննեսը Թեոփիլոս կայսեր ուսուցիչն էր և այդ կայսրն էր, որ իր ուսուցչին նստեցրեց պատրիարքական աթոռին։ Բայց այս ժամանակաշրջանի, ինչպես և բյուզանդական ողջ բազմադարյան մշակույթի լուսապսակը պատրիարք Փոտն էր, բյուզանդական և համաշխարհային մշակույթի այդ ռահվիրան, որը նույնպես հայազգի էր։ Նա թագուհի Թեոդորայի և կեսար Վարդասի փեսա Արշավիրի քրոջ՝ Իրենեի որդին էր։ Հենց Փոտը դարձավ սլավոնական լուսավորիչներ Կիրիլլի և Մեթոդիոսի ուսուցիչը, հենց կեսար Վարդասն էր, որ նրանց ուղարկեց սլավոնների մեջ լուսավորություն տարածելու։

Ահա այսպիսին էր վիճակը Բյուզանդիայում նշված ժամանակաշրջանում։ Ամենուրեք հայեր՝ որոնք օտարացած չէին, չէին մոռացել իրենց մայրենի լեզուն, չէին ուրանում իրենց հայկական ծագումը։ Այս բոլորից հետո պարզ է, որ Վասիլի գահ բարձրանալը պատահական երևույթ չէր։ 867 թ. հայազգի Վասիլը հիմնադրում է «Մակեդոնական» կոչված հարստությունը, որի շուրջ երկդարյա իշխանության ժամանակաշրջանը իրավամբ բյուզանդական կայսրության պատմության ամենափայլուն շրջանն է համարվում։

863 թ. Պոսոնի ճակատամարտում հայազգի զորավար Պետրոնասը արաբների դեմ փայլուն հաղթանակ էր տարել։ Դրանից հետո Հայաստանի հարցը երկդարյա ընդմիջումից հետո կայսրության համար նորից օրակարգի հարց դարձավ։ Սկսվեց հայ-բյուզանդական հարաբերությունների նոր փուլը։ Հայաստանը Բյուզանդիայի արտաքին քաղաքականության ուշադրության հիմնական առարկա էր խալիֆայությունից հետո։

Հարցն այն է, որ արաբա-բյուզանդական դարավոր մրցակցությունը հասցրել էր այն-բանին, որ Հայաստանի անջատումը կազմալուծվող խալիֆաթից և նրա դաշինքը Բյուզանդիայի հետ կարող էին նպաստավոր լինել վերջինիս վճռական գերակշռության համար՝ խալիֆաթի հանդեպ։

Օգտվելով արաբա-բյուզանդական 7-ամյա պատերազմից (856—863) Աշոտ Բագրատունին 862 թ. իրեն իշխանաց իշխան էր հռչակել, իսկ 885 թ.՝ նաև թագավոր։ Վասիլ Ա-ը շատ էր շահագրգռված բարեկամական հարաբերություններ հաստատելու Աշոտ Բագրատունու հետ, հասկանալի է, արաբների դեմ դաշնակից ունենալու համար։ Ավանդությունը հաղորդում է, որ Վասիլը նույնիսկ ցանկացել էր թագադրվել Աշոտ Բագրատունու ձեռքով։ Իհարկե, այդ բանին դեմ չէր և հայոց իշխանաց իշխանը։ Նա ևս տվյալ շրջանում ուզում էր ունենալ բյուզանդական օժանդակությունն իր դիրքերն ամրապնդելու համար։ Եռանդուն աշխատանք էին տանում նաև հոգևոր պետերը։ Զաքարիա Ա Զադեցի կաթողիկոսը և Փոտ պատրիարքը դեռ Վասիլի գահ բարձրանալուց առաջ երկար նամակագրություն ունեին եկեղեցիների միության խնդրի շուրջը։

Վասիլ Ա-ը իրեն Արշակունի հռչակեց, թեև նրա երակներում Արշակունի արյան մեկ կաթիլ անգամ չկար։ Ընդունված է ասել, որ Վասիլն այդ քայլին դիմեց՝ նպատակ ունենալով իր հասարակ ծագումը սքողել, իր գահ բարձրանալը օրինականացնել։ Դա շատ հնարավոր է, բայց հիմնական դրդապատճառը այդ չէր։ Վասիլի քայլը շատ հեռուները գնացող քաղաքական նպատակներ ուներ։ Հայաստանում Արշակունիների հարստության գոյության ժամանակ Հայաստանի բոլոր նախարարությունները հանդիսանում էին տիրող հարստության վասալները, այդ թվում և IX դ. վերապրած և կիսանկախ իշխանություններ հաստատած Բագրատունիները, Արծրունիները, Անձևացիք, Սյունիները և մյուսները։ Իրեն Արշակունի հռչակելով, հասկանալի է, Վասիլը հանդես էր գալիս որպես այդ բոլորի սյուզերենը, ցանկանում de jure իրենից կախման մեջ գցել նրանց։ Մեր այս միտքը հաստատվում է բյուզանդական արքունիքում հորինված մի «տեսությամբ», համաձայն որի իբրև թե պարթևների արքա Արշակի առաքինության և ձեռք բերած մեծ փառքի պատճառով, օրենք դարձավ, որ այսուհետև պարթևների, հայերի և մարերի վրա թագավորեն բացարձակապես Արշակի տոհմի ներկայացուցիչները կամ նրա շառավիղները։ Նպատակը պարզ է, քանի որ Վասիլն իրեն Արշակի շառավիղն էր համարում, հասկանալի է, որ այդ այսպես կոչված «օրենքի» համաձայն նա պետք էր թագավորեր, նաև հայերի վրա։

Դա, իհարկե, դարավոր ստրկությունից հետո հազիվ ինքնուրույնություն ձեռք բերած հայ իշխանների և ժողովրդի համար փայլուն ապագայի նախերգանք չէր կարող լինել. նրանք ամենևին էլ չէին ուզում մի տիրողի ձեռքից հազիվ ազատված մի ուրիշի ձեռքն ընկնել, թեկուզ և քրիստոնյայի և ամեն միջոցներով աշխատում էին կանխել այդ բանը։

Հայ-բյուզանդական փոխհարաբերություններն ավելի սերտ դարձան Վասիլի հաջորդների, հատկապես Լևոն Զ-ի և Կոստանդին Ծիրանածինի օրոք։ Ցանկանալով օգուտ քաղել Յուսուֆ ոստիկանի Հայաստանում կատարած ապատակությունների հետևանքով ստեղծված ծանր վիճակից, Բյուզանդական կայսրությունը պատրիարք Նիկողայոսի միջոցով մի քանի անգամ դիմեց հայոց կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն և հայոց թագավորին, օգնություն խոստանալով, որի դիմաց սակայն, նկատի ուներ Հայաստանը կայսրությունից վասալական կախման մեջ գցել։ Բյուզանդական կառավարությունը նույնիսկ Կոստանդնուպոլիս հրավիրեց Սմբատ Ա-ի որդի Աշոտ Բ երկաթին, որին մեծ պատիվներով ընդունեց Զոե կայսրուհին։

Թեև արտաքնապես այդ հարաբերությունները բարեկամական էին, բայց իրականում մահու և կենաց կռիվ էր գնում։ Կայսրությունը բաց չէր թողնում և ոչ մի առիթ իր՝ դարերի համար մշակած ծրագիրը՝ Հայաստանի նվաճումն իրականացնելու համար։ X դ. առաջին տասնամյակներին Բյուզանդիան արաբներից գրավեց Երրորդ Հայքի մայրաքաղաք Մելիտենեն և նրա շրջակայքը, 949 թ.՝ Կարինը, ապա Ապահունիքն ու Հարքը, Տարոնը, Բասենը, Տայքը, Վասպուրականը, ոչնչացրեց Շիրակի հայկական թագավորությունը և վերջապես Կարսի թագավորությունը։ Այսպիսով շուրջ երկու հարյուր տարվա ընթացքում Բյուզանդական կայսրությանը հաջողվեց նվաճել երկար պայքարից հետո անկախություն ձեռք բերած գրեթե ամբողջ Հայաստանը։ Կայսրությունը դրանով էլ չբավարարվեց։ Նա փորձեց տիրանալ Դվինի արաբական ամիրայությանը՝ Անին գրավելու հաջորդ տարին մեծ արշավանք ծավալելով, բայց 1047 թ. ծագած Լևոն Թոռնիկի ապստամբությունը Բյուզանդիայում խանգարեց դրան։

Հայ-բյուզանդական հարաբերությունների այս երկրորդ շրջանում էլ, հակառակ քաղաքական ու դավանաբանական սուր պայքարին, տնտեսական և մշակութային կապերը Բյուզանդիայի և Հայաստանի միջև զարգանում էին բավականին բարենպաստ կերպով։ Արաբա-բյուզանդական մրցակցությունը բացասաբար էր ազդել միջազգային տարանցիկ առևտրի վրա։ IX դ. երկրորդ կեսին իր անկախությունը վերականգնած Հայաստանը ակադ. Հ. Մանանդյանի դիպուկ բնորոշմամբ, դառնում է իդեալական բուֆեր, որտեղ հանդիպում էին արաբական և բյուզանդական երկրներից եկող առևտրական կարավանները։ Մեծ ծաղկում ապրեցին Հայաստանի քաղաքները, որոնք միջազգային առևտրին մասնակցում էին սեփական արտադրանքով, որի բազմաթիվ տեսակները հայտնի էին բյուզանդական քաղաքների շուկաներում։ Միաժամանակ, բյուզանդական ապրանքները վաճառքի էին հանվում Հայաստանի շուկաներում։

Հայերը շարունակում են մեծ հետաքրքրություն տածել դեպի հին հունական դրականությունն ու արվեստը, որոնց հետ ծանոթանում են Բյուզանդիայի միջոցով։ Հայ միջնադարյան մշակույթի գործիչների մեջ պետք է անպայման ընդգծել նշանավոր փիլիսոփա և ռազմական գործիչ, հունական մշակույթի մեծ գիտակ Գրիգոր Մագիստրոսի անունը, որ հակառակ իր ջերմ հայրենասիրության, Հայաստանի անկախությունը Բյուզանդիայի ոտնձգություններից պաշտպանելու իր ճիգերին, ամենևին էլ չէր դադարել հիանալ հին հունական արվեստով, սիրել հունական դրականությունը, գիտությունը, ձեռնարկել հին հույն հեղինակների աշխատությունների թարգմանությանը։ Ինչպես նախորդ, նույնպես և այս շրջանի հայ պատմագրությունը բավականին նյութ է մատակարարում ոչ միայն հայ-բյուզանդական հարաբերություններն ուսումնասիրող մասնագետին, այլև բյուզանդական կայսրության պատմության։ Նույն բանը կարելի է ասել բյուզանդական աղբյուրների մասին՝ Հայաստանի վերաբերյալ։ Հայերը ևս գիտության և արվեստի բնագավառում իրենց լուման են մուծում Բյուզանդիայում։ Կարելի է հիշել նշանավոր հայ ճարտարապետ Տրդատին, որը 985 թ. վերակառուցեց Կոստանդնուպոլսի սուրբ Սոֆիայի երկրաշարժից փլված գմբեթը։

Խնդրո առարկա ժամանակաշրջանի հայ-բյուզանդական մշակութային կապերի լավագույն օրինակը նշանավոր «Դիդենիս Ակրիտաս» էպոսն է։ Հա-

կառակ այդ բանի, որ Բյուզանդական էպոսը ահա մեկ հարյուրամյակ է, ինչ ամեն տեսանկյունից ուսումնասիրվում է, նրա մասին գրված գրքերն ու հոդվածները կարող են մի ամբողջ գրադարան կազմել, այնումանայնիվ «Դիգենիս Ակրիտասը» դեռ երկար ժամանակ նոր նյութ պիտի մատակարարի և՛ բյուզանդագետներին և՛ հայագետներին։

Խոսել «Դիդենեսս Ակրիտասի» մասին և կանգ չառնել հայերի՝ նրա ստեղծման գործում խաղացած դերի վրա, հազիվ թե ճիշտ լիներ։ Դեռ Ն. Ադոնցը համոզիչ կերպով ցույց տվեց, որ բյուզանդական էպոսը ստեղծվել է հայկական միջավայրում, որ նրա մեջ հանդես եկող պերսոնաժների մեծ մասը հայեր են ծագումով։ Հետագա ուսումնասիրությունն էլ ցույց տվեց բյուզանդական էպոսում պահպանված հայկական ժողովրդական երգերի, հայազգի նոր պերսոնաժների, զուտ հայկական մի շարք տեղանունների առկայությունը։ Դեռ ավելին, այժմ կարելի է խոսել նույնիսկ էպոսում հանդես եկող արմենիզմների մասին։

Այս շրջանում հայոց ռազմա-քաղաքական գործունեությունը Բյուզանդիայում ամենևին էլ չի դադարում։ Հանդես են գալիս նորանոր դեմքեր, որոնք բյուզանդական կայսրության պարծանքն են համարվում, թեև իրենց գործունեությամբ միշտ չէ, որ օգուտ են բերել իրենց հայրենիքին՝ Հայաստանին։ Կայսրերից պիտի ընդգծել Ռոմանոս Լեկապենոսի, Նիկեփոր Բ Փոկասի, Հովհան Չմշկիկի և Վասիլ Բ-ի անունները, իսկ զորավարներից Մլեհ-Մելիասին և Հովհաննես Կուրկուասին, որ Նոր Բելիսարիոս անունն ստացավ ժամանակակիցների կողմից։ Պետք է ընդգծել նաև Կոստանդին Տիրանածինին՝ Վասիլ Ա-ի թոռան, որը թեև որպես կայսր աչքի չընկավ, բայց հայտնի է որպես բյուզանդական մշակույթի նշանավոր գործիչ։ Այս հայերը, որոնք որպես պետական գործիչներ բյուզանդացիներ էին, իրենց ազգային դեմքը չէին կորցրել։ Բյուզանդական կյանքում, առաջին հերթին արվեստի բնագավառում, արևելյան ազդեցության ուժեղացումը նկատելի է հատկապես IX—XI դդ., երբ հայկական տարրը երկրի կյանքում խաղում էր ամենազգալի դերը։

Բյուզանդիան, տիրանալով Հայաստանին, առաջին գործը համարեց բնիկ ավագանուն տեղահան անելը։ Կալվածքներ, ապա և բարձր պատվաստիճաններ պարգևելով նրան հաջողվեց հայ ազնվականության զգալի մասը գաղթեցնել Արևմուտք, նրանց փոխարեն բյուզանդացի ֆեոդալներ բնակեցնելով Հայաստանում, որոնց ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկը Եվստաթիոս Բոյիլասն էր։ Հայաստանը բաժանվեց ռազմա-քաղաքական առանձին շրջանների, որոնք կատապանություններ էին կոչվում կատապանի կամ դուքի գլխավորությամբ։ Կայսրությունը Հայաստանում մտցրեց իր կարգն ու կանոնը, հարկադրման իր սիստեմը։ Տեղական բնիկ զորքերը, որոնք Հայաստանի նվաճումից անմիջապես հետո դեռ պետք եկան կայսրությանը, նա ի վերջո ցրեց, դրա փոխարեն զինվորական հարկ մտցնելով։ Նուտով սկսվեցին նաև կրոնական հալածանքները։ Հայոց կաթողիկոսությունը Անիից հեռացվեց և տեղափոխվեց կայսրության ավելի մոտիկ շրջան՝ Սեբաստիա։ Կայսրությունը շատ լավ էր գիտակցում, որ պետականության վերացման պայմաններում հայերին կենտրոնացնող և համախմբող միակ ուժը հայոց կաթողիկոսությունն էր, և դրանով նրան այդ հնարավորությունից զրկեց։

Նման քաղաքականությունը սակայն ի վերջո ճակատագրական դարձավ հենց իրեն կայսրության համար։ Նա վերացրեց այն պատնեշը, որ փակում

էր դեպի Բյուզանդիա ձգտող թշնամական հորդաները։ Երբ XI դ. առաջին տասնամյակներում Հայաստանում երևացին սելջուկ թուրքերը, Բյուզանդիան ի վիճակի չեղավ նրանց առաջն առնել, իսկ Հայաստանն էլ զրկվել էր այդ կարողությունից։ «Հոռոմները,— գրում է Մատթեոս Ուռհայեցին,— աստիճանաբար երկրից հեռացրին քաջ զինվորականներին..., նրանք քանդեցին երկրի պարիսպը, որ զինվորներն ու զորավարներն էին կազմում»։ Կես դարանց տեղի ունեցավ Մանազկերտի ճակատամարտը, որը Բյուզանդիայի, և ոչ միայն Բյուզանդիայի, համար ճակատագրական նշանակություն ունեցավ։ Շուտով ամբողջ Փոքրասիական թերակղզին անցավ թուրքերի ձեռքը։ Հայ-բյուզանդական հարաբերությունների մասին այլևս խոսք լինել չի կարող, թեև հայ նշանավոր գործիչներ ժամանակ առ ժամանակ նորից փայլում էին Բյուզանդական կայսրության օրըստօրե մթնող երկնակամարում։

Թեև սելջուկ թուրքերի Փոքրասիական թերակղզուն տիրանալը հայ-բյուզանդական հարաբերություններին բուն երկրում վերջ դրեց, այնուամենայնիվ այդ հարաբերությունները շարունակվեցին Հայաստանից դուրս, Կիլիկիայում, որտեղ հայության մի ստվար զանգված, բյուզանդական ու թուրքական ճընշումներից խուսափելով, ապաստան էր գտել և ստեղծել իր անկախ իշխանությունը։ Գտնվելով աշխարհագրական տեսակետից շատ բարենպաստ տեղում, Կիլիկյան հայկական պետությունը գնալով բարգավաճեց։ Այնտեղ զարգացում ապրեցին արհեստներն ու առևտուրը, մշակույթը։ Կիլիկիայի հայկական պետությունը քաղաքական և մշակութային լայն կապեր հաստատեց Մերձավոր Արևելքի և Արևմտյան Եվրոպայի բազմաթիվ երկրների և, ամենից առաջ, Բյուզանդիայի հետ։ Հայ-բյուզանդական հարաբերություններն այս շրջանում այնքան սերտ էին, որ XII դ. երկրորդ կեսից նորից սկիզբ առան երկար բանակցությունները երկու եկեղեցիների միության առթիվ։

XIV դ. վերջում Կիլիկիայի հայկական պետությունը դադարեց գոյություն ունենալուց, դրա հետ մեկտեղ վերջ գտան նաև հայ-բյուզանդական քաղաքական փոխհարաբերությունները, թեև դրանից հետո մինչև Բյուզանդական կայսրության անկումը հայ տարրը շարունակում էր կարևոր դեր խաղալ Բյուզանդիայի կյանքում։

## ВИЗАНТИЯ И АРМЕНИЯ

Р. М. БАРТИКЯН

### Резюме

В средние века в жизни армянского народа ни одно соседнее государство не сыграло такую важную роль, как Византия. В то же время и в жизни Византии, после греков, ни один народ не имел такого веса, как армяне. Исходя из этого невозможно изучать историю Армении и Византии в отрыве друг от друга.

Византия в жизни армян сыграла двоякую роль, положительную и отрицательную. Отрицательную, если иметь в виду политическую сторону вопроса: стремление Византии уничтожить армянскую государственность, захватить армянские земли, ее политику ассимиляции армян на завоеванных территориях Армении. И положительную, если принять

во внимание взаимоотношения и взаимопроникновения в области науки и культуры. Взаимоотношения и связи между Арменией и Византией не имели нормального развития, что связано с исторической судьбой армянского народа и, в первую очередь, его государственности.

В эпоху арабского владычества эти взаимоотношения почти прекратились. Из-за создавшегося в стране тяжелого положения процесс переселения армян в Византию стал более интенсивным, что способствовало повышению роли армян в разных областях жизни империи, особенно в военной и государственной, а также в экономической и культурной.

С середины IX в., после ослабления арабского халифата и усиления Византии на востоке, империя вновь стала интересоваться Арменией и ей удалось постепенно завоевать до середины XI в. почти всю приобретшую независимость Армению, упразднить ее вооруженные силы. Этим самым, однако, Византия ослабила свои восточные позиции и скоро лишилась не только Армении, но и многих сугубо византийских областей.

Армянская государственность была возрождена в конце XI в. в Киликии, и просуществовала до конца третьей четверти XIV в. Между Киликийским армянским государством и Византией были продолжены вековые тесные взаимоотношения. И в самой Византии армяне продолжали играть заметную роль до падения империи в 1453 г.